ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 20.02.2018թ. հ.Ե-1/190 գրության, տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետի 29.12.2017թ. հ.4933-Ա որոշմամբ հաստատված «Երևանի քաղաքապետարանի 2018 թվականի աշխատանքային ծրագրի» հավելվածի «Կրթություն» բաժնի 89-րդ կետով՝ սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովման նպատակով նախատեսված է հայ ժողովրդի պատմության տարեթվերին նվիրված միջոցառումների կազմակերպում, որի շրջանակներում դպրոցներում իրականացվել են բաց դասեր, նաև ազատամարտիկների հիշատակին ձոնված միջոցառումներ են անցկացվել նրանց անվան սրահներում, կազմակերպվել է այցելություն Եռաբլուր և աշակերտներին հանձնարարվել է գրել շարադրություն՝ «Ինչ գիտես Շուշիի մասին» թեմայով: Արցախյան թեման ծրագրային նյութ է, այն «Վերակառուցումը և Ղարաբաղյան շարժումը», «Ազատագրական շարժման վերելքը» վերնագրով ուսումնասիրվում է 9-րդ դասարանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ